գաղափարները — ազդեցութիւնների խնդիրն աւելի պարզ հասկանալու համար:

Ամենից հիմնական գաղափարը, որ հեղինակը հետեւողականօրէն հետապնդում է իր գրուածքի մէջ, է հայ ժողովրդի երջանկութիւնը: Երջանկութիւնը նա դնում է որպէս վերջնական նպատակ հայ ժողովրդի համար եւ ապա ըստ այնմ առաջադրում այն գաղափարմիջոցները, որոնք — նրա կարծիքով — տանում են դէպի այդ երջանկութիւնը:

Պարզ է, որ ինչո՛ւ այդ միջոց-գաղափարների շարքում առաջին տեղը նա տալիս է հայ ժողովրդի անկախութեան, որովհետեւ քաղաքական ազատութիւնը նախապայմանն է ժողովուրդների եւ անհատների բոլոր ազատութիւնների — ե՛ւ տնտեսական, ե՛ւ ընկերային, ե՛ւ մշակոյթային: Իսկ առանց ազատութեան ո՛չ մի ժողովուրդ եւ ո՛չ մի անհատ չի կարող երջանիկ լինել:

Դրան զուգընթաց՝ նա պահանջում է ռամկավար հանրապետութիւն ազատ Հայաստանի համար, ուր ժողովուրդը ինքը պիտի լինի երկրի եւ իշխանութեան գերագոյն տէրը: Նա պահանջում է, որ օրէնքը կազմի պետութեան հիմքը, բարի, արդար եւ անխախտ օրէնքը, իսկ այդ օրէնքի առանցքը կազմեն մարդու բոլոր բնական իրաւունքները, յատկապէս ազատութիւնները, հաւասարութիւնը եւ սեպհականութեան անձեռնմխելիութիւնը:

Գալով ազդեցութիւնների խնդրին, պէտք է ենթադրել, որ առաջին աղբիւրը, որտեղից Շահամիրեանը կարող է ազդուած լինել, Ս. Գիրքն է: «Որոգայթ Փառաց»ի մէջ մենք շատ յաճախ ենք հանդիպում քաղուածքների ու վկայութիւնների Աստուածաշնչից, որոնք ապացուցանում են, որ հեղինակը լաւ ծանօթ էր նրան: Յատկապէս հաւասարութեան եւ ըստ գործի վարձատրութեան սկզբունքները, որ այնքան զօրեղ կերպով շեշտուած են «Նոր Կտակարանի» մէջ, կարող էին, անշուշտ, իրրեւ խթան ծառայել մեր հեղինակի համար:

Այնուհետեւ հայոց պատմութիւնը, մասնաւորապէս Մովսէս Խորենացին, կարող էր ազդած լինել մեր հեղինակի վրայ: Ինքն էլ յաճախ խոստովանում է, որ «բարեգոյն Մովսէս Խորենացին տոչորէ սիրտ իմ եւ սիրտ ամենայն արանց ազգասիրաց յոյժ» (22): Հայոց պատմութիւնը պիտի բանար նրա աչքերը տեսնելու, թէ հայերը ի՛նչ անցեալ են ունեցել, պատմութեան ի՛նչ փառաւոր էջեր — թէեւ սակաւաթիւ, իսկ այժմ ո՛րքան տխուր ու ողբալի վիճակի մէջ են: Ազգի տարբեր վիճակների համեմատութիւնից եւ հակադրութիւնից նրա գլխում, բնականօրէն, ծնունդ պիտի առնէր Հայաստանի անկախութեան գաղափարը, իր հետ կապուած բոլոր յարակից հանգամանքներով, որոնք անհրաժեշտ են իւրաքանչիւր ժողովրդի փրկութեան եւ երջանկութեան տեսակէտից:

Որպէս դաղափարներ տուող աղբիւր կարող էր ծառայել նաեւ օտար ազգերի պատմութիւնը: Նա գիտէ եւ պատմութիւնից ճանաչում է մի շարք ազգեր, որոնք մինչեւ իսկ աւելի թոյլ լինելով եւ աւելի վատթար պայմաններում, քան հայերը, այնուամենայնիւ կարողացել են փչրել իրենց սարկութեան շղթաները, քաղաքական ազատութիւն են ձեռք բերել եւ իրրեւ անկախ ժողովուրդ՝ աճել են, զարգացել ու զօրացել: Նրան լաւ ծանօթ են Հռոմի, Միր Վէյլսի, Բէրիմ Խանի եւ ռուսների պատմութիւնները. ոչնչութիւնից նրանք այժ են դարձել, պետութիւն կազմել եւ ինքնուրոյն բարգաւաճել: Ինչո՞ւ ուրեմն հայ ժողովուրդը եւս չպիտի կարողանայ նոյնն անել:

Մասնաւորապէս հին Հռոմի պատմութիւնը շատ խրատական է Շահամիրեանի համար, ուստի եւ նա Հռոմը ներկայացնում է — կարելի է ասել — որպէս տիպար ապագայ ազատ Հայաստանի: Երկար կանգ է առնում Հռոմի զարգացման պատմութեան վրայ՝ ապացուցելու համար, որ Հայաստանն էլ կարող է նրա նման զօրեղ եւ երջանիկ լինել, եթէ նրա օրինակին հետեւի, այսինքն՝ եթէ նա էլ անկախ հանրապետութիւն լինի եւ կառավարուի ժողովրդից դրուած օրէնքներով: Հռոմով այնքան է ոգեւորուած նա, որ ցանկանում եւ բոլոր սրտով փափաքում է, որ «Հռոմայեցւոց հոգու զօրութիւնը իմնի հայոց հոգու վրայ, բացի նրանց հեթանոսական հաւատից» (86): Նա ցանկանում է, որ հայերն էլ ունենան Հռոմի պատմութիւնը հայերէն, որպէսզի ամէնքն էլ կարողանան կարդալ եւ ծանօթանալ նրա հրաշալի կարգերին. «Ով պատճառ լինի Հռոմի պատմութեան թարգ-